??????? ??????

# ?????????



# Նահապետ Քուչակ
# Հայրեններ

*http://www.litres.ru/pages/biblio_book/?art=21107310*

# Содержание

*** 4
*** 5
*** 6
*** 7
*** 8
*** 9
*** 10
*** 11
*** 12
Конец ознакомительного фрагмента. 13

# Նահապետ Քուչակ
# Հայրեններ

## ***

Երբ սէրն ի յաշխարս եկավ, եկավ իմ սիրտս բնակեցավ.
Հապա յիմ սրտես ի դուրս՝ յերկրէ յերկիր թափեցավ.
Եկավ ի գլուխս ելավ, ի ըղեղս ելավ թառեցավ:
Աչիցս արտասուք ուզեց, նա արյուն ի վար վաթեցավ:

***

Յայդ լեռնեդ ի վայր գայի, կանչեցի, թե՝ «Յու՞ր կա կանանչե:
Մեկիկ մ՚ այլ ինձ զայն ասաց. «Սար ու ձոր ամենն է կանանչ.
Ով որ սրտով սեր ունի, իր սրտին երակն է կանանչ.
Ով որ սրտով սեր չունի, սիրտն է սև, երեսն է կանանչե:

***

Քան զսերն այլ քաղցրիկ պտուղ ի աշխարհս չավտամ թե լինի.
Շաքարն նշով շաղված՝ մոտ ի սերն է դառն ու լեղի.
Ջիամն ալ առի ես այլ, սիրո տեր եղա հետ քեզի:
Սերդ ալ իմ սրտիս դու տուր, քո սիրուդ եմ ճորտ ու գերի:

***

Ու՞ր էիր, ուսկի՞ց եկիր, անծանոթ, ըզիս սիրեցիր.
Կրակն ի թեզնիքդ ու՜ իր, ի ծոցիկս ի վար թափեցիր.
Քո սերդ ալ ոսկի արիր, իմ սրտիս քուրան հալեցիր.
Դարձար զան հալխա արիր ՝ ւ իմ սրտիս ականջն անցուցիր:

***

Քու սերն իմ սրտիս միջին հանց մտեր, զետ ոսկի բևեռ.
Գնացեր է սրտիկս ի ներս, փառչին եղեր կեռումեռ.
Քու սերդ իմ սրտիս միջին հերկ արեր ու դարձեր է եռ:

***

Ու՞ր էիր, ուսկի՞ց եկար, քան զամեն ծաղիկ դու պայծառ.
Եկիր՝ ւ ի հոգիս մտար, չես ի տար պահիկ մի դադար.
Սրտիս մեջն ի ժուռ եկար՝ ւ ելնելու ճարակ չի գտար.
Զարկիր ի գլխուս վերա՝ ւ աչերուս ի վար թափեցար:

***

Աշխարհս, ա՛մ, ալ ի՞նչ աղվոր, որ լինի երկու սերն նոր.
Երկու սերն նոր լինի, երկուսին դովին մոտևոր.
Վաղվընեքն ի վեր ելնեն, բարև տան քան զկարևոր.
Պագ տան ու պագ առնուն, քանց հարյուր տարին կարևոր:

***

Նայե ի վերա քարին, լուկ զքարամն ի քեզնե արա՛.
Քան զքարն այլ ամուր չկա, նայի՝ ջրի ճամփեն նա կուտա.
Զաղացին քարն է հարյուր լիտր՚ւ ջրին աhեն կու դողա.
Իմ սիրտս է պատառ մի միս, քու սիրույդ, ա՜մ, ո՞նց դիմանա:

***

Տարպա մի սիրու վերա ծեծեցին, կողերս երևաց.

# Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, купив полную легальную версию на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.